

Լուացեր, հայ, լըւացեր,

Դարձեր ջրին հարցմունք եղեր, հայ:

Չուր դու ի որ լեռնէն կուգաս,

Իմ պաղուկ ջրիկ ւ' անուշիկ, հայ.

Ես այն լեռնէն կուգամ

Որ հին ու նոր ձիւնն ի վրան, հայ:

Չուր, դուն ի որ առուն կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ ւ' անուշիկ, հայ.

Ես ի այն առուն կերթամ,

Որ փունջը շատ է մանուշակին, հայ:

Չուր դու, ի որ այգին կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ ւ' անուշիկ, հայ.

Ես ի այն բոյս կուջրեմ,

Որ տակն խոտ բերէ դառին, հայ:

Չուր դու, ի որ պաղչայ կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ ւ' անուշիկ:

Ես ի այն պաղչան կերթամ՝

Որ պիւլպիւլին ձայնն կուգայ, հայ:

Չուր դու, ի որ աղբիւր կերթաս,

Իմ պաղուկ ջրիկ ւ' անուշիկ, հայ.

Ես ի այն աղբիւր կերթամ՝

Որ զայ իմ տէրն ջուր խմէ, հայ,

Բարենմ ի դէմ երթամ,

Ապա սիրովն յագենամ, հայ:

ԿԱՐԵՒՈՐ ՀՈՒՐԵՐ

Հայ Խուրդեր.—Եակ լրագիրը առն լով Խարբերդում հրատարակուող «Եփրատ» լրագրից, գրում է, որ Հայ—քուրդերը ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց Հայ ծագման մասին և չգիտեն Հայերէն։ Դրանք տարբերւում են իսկական քրդերից իրանց բարբառով և բարբով, որ կրում է Հայկական դրոշմ, իրանց նախնիներից պահպանել են միայն քրիստոնէական կրօնը, որը միակ անջրագետն է Հանդիսանում մահմեդական քրդերի հետ ձուլուելուն։

Կ. Պօլսոյ «Հայրենիք» լրագիրը հրաւիրում է Հայերի միահամուռ գործակցութիւնը այս հայ քրդերի կրթու-

թեան և հայ քաղաքակրթութեանը հազորդակից գարձակու վերայ։

Լրագիրները հազորդում են որ ակադեմիկ Մառը յայտնել է, թէ հայ-վրացական բանասիրութեան գործիշների ամառու ենթադրուած ժողովը չի կայանալ։

Մոսկվայում պատրաստում են տօնել Մայիս 2-ին բանաստեղծ պ. Ալեքսանդր Ծատուրեանի գրական գործունէութեան 25 ամեակը. յօրելեանի առիթով կընդունուեն ուղերձներ, հնապագրեր, գրամական նուէրներ։

Յանկութիւն կայ պ. Շիրվանզադէի գրական գործունէութեան 25 ամեակն էլ տօնել. Շիրվանզադէն յայտնի է որպէս վիպագիր և թատերագիր. Նրա գրական գործունէութեան առիթով Արարատում լոյս է տեսնում մի ընդարձակ յօդուած, ուր խօսում է, թէ միջավայրը ինչ ազդեցութիւն է ունեցել թէ Շիրվանզադէի և թէ նրանից առաջեղած հայ վիպագիրների վերայ։

Է. Դ. Ռ. Ա. Բ. Դ. VII

Անգլիայի վեհապետ էդուարդ VII-ի մահը տեղի ունեցաւ ապրելի 23-ին, երեկոյեան ժամը 11 և 50 րոպէին, կարճ հիւանդութիւնից յետոյ, 69 տարեկան հասակում։

Մեծ-Բրիտանիայի թագաւոր և Հնդկաստանի կայսր էդուարդ VII-ը Վիկտորիա թագուհու և նրա ամուսին պրինց Ալբերտի անդրանիկ որդին էր. նա ծնուել է 1841 թ. նոյեմբերի 9-ին Լօնդոնում, Բուքինհէմի պալատում. մկրտութեան ժամանակ ստացաւ Ալբերտ-էդուարդ անոնը, բայց իրիւ գահաժառանգ յայտնի էր Ուէլսի պրինց կամ, ըստ ֆրանսիացիների, prince de Galles անունով։

Նրա կրթութեան վրայ հսկում էր՝ յատկապէս հայրը՝ Ալբերտ պոիինցը, որ մի շատ կրթեալ անձնաւորութիւն էր՝ Ընտանեկան կոմութիւնից յետոյ երիտասարդ էդուարդը մտաւ Էդինբուրգի համալսարանը, իսկ 1838—60 թ. լսեց դասախոսութիւններ Օկաֆօրդի և Կեմբրիջի համալսարաններում։ Ապա նա ճանապարհորդեց Հիւսիսային Ամերիկայում։

Մտնելով զինւորական ծառայութեան մէջ՝ նա ստացաւ գնտապետի աստիճան և 1861 թ. մի քանի ժամանակ ապրեց զօրաբանակի մէջ, իսկ յետոյ ճանապարհորդութիւն կատարեց Սրբելքում դօքտօր Ստէնլիի և Ռիչարդ Օվէնի ուղեկցութեամբ։ Վերադարձին Անգլիա՝ նա, իրեւ Կօրնվալեան դուքս, լորդերի պալատին անդամակցեց և իր հոգանաւորութեան ներքոյ առաւ շատ բարեգործական հիմնարկութիւններ։ Նա ամուսնացաւ 1863 թ. դանիական թագաւոր Քրիստիան IX-ի դստեր՝ իշխանուհի Ալբրանդրայի հետ, որ ոռւսաց Մայր-կայսրուհի Մարիա Ֆէօդօրօֆնայի հարազատ քոյրն է։ 1875 թ. էդուարդը դարձաւ անգլիական մասսօնների մեծ մագիստր։ Լինելով դահաժառանգ, նա քիչ էր մասնակցում Անգլիայի քաղաքական գործերին։ 1875—76 թ. նա, լորդ Բիկոնսֆիլդի պնդմամբ, մի ճանապարհորդութիւն կատարեց Հնդկաստան, որից յետոյ և Վիկտօրիա թագուհին ընդունեց հնդկական կայսրուհու տիտղոսը։

Մտնելով բրիտանական զօրքի մէջ գնդապետի աստիճանով, հասաւ ֆելդմարշալի աստիճանին և համարում էր նաև պրուսական զօրքի ֆելդմարշալ։ Ալբրանդը III ոռւսաց կայսրի մահից յետոյ, նա 1394 թ. այցելութիւն տուեց ոռւսական արքունիքին, Վիկտօրիա թագուհու մահից յետոյ, նա բարձրացաւ 1901 թ. յունուարի 22-ին (ն. տ.) անգլիական դահը, իրեւ արքայ Մեծ Բրիտանիայի և կայսր Հնդկաստանի էդուարդ VII անունով, և մի քանի օրից յետոյ հանդիսաւոր երդումն ընդունեց՝ հաւատարիմ մնալու սահմանադրութեան, իսկ վետրվարի 14-ին անձնապէս բացեց պարլամենտը դահական ճառավ-

Էդուարդ Վլլի աւագ սրդին, գահաժառանգ Ալբերտը մեռաւ 1892 թ., իսկ այժմ Անդրեյի դահն է բարձրանում նրա երկրորդ սրդին՝ Գէորգ Ֆերդինանդ Էրնեստ իշխանը (ծն. 1865 թ.), որ յայտնի է նաև Եօրի և Կօրնվալլի դուքս և Ռեչլսի պրինց անունով:

Յիւզանդիսնը հազարդում է, որ Մարտի 21-ին Գերմանիայի կայսեր սրդին Այտէլ Ֆրիերիի և իւր ամուսինը հասել են Երուսաղէմ:

Նորին բարձրութիւններին դիմաւորել են ո. Յարութեան տաճարում, ըստ սովորութեան՝ տաճարի դրան առաջ՝ լատինաց պատրիարքը, տաճարի դրան ներքնագաւթում, Քրիստոսի պատահատեղու առաջ՝ մեր պատրիարքական տեղապահը, իսկ գերեզմանի առաջ՝ յունաց պատրիարքի կողմից մի եպիսկոպոս:

Այցելել են Յարութեան տաճարում լատինաց յունաց և Հայոց մատուռները: Ս. Յարութեան տաճարից մեկնելուց յետոյ այցելել են նաև Հայոց Ս. Յակովեանց Մայրավանքը ու առաջնորդուել պատրիարքարքանի գահինը, ուր պատրիարքական տեղեպահը բարի գալուստ է մաղթել: Իշխանը իմանալով, որ սրբազն պատրիարքը 95 ամեայ է և զառամելութեան պատճառով անկարող է եղել դիմաւորել, փափագել է ինըն անձամբ գնալ նրա սենետակն ու տեսնել, բայց այդ ժամանակ ծերունի պատրիարքը վարդապետների օգնութեամբ առաջնորդուել է գահին, որին դիմաւորել են իշխանն ու իշխանուհին: Ծերունի պատրիարքը անգլիերէն մի քանի բառեր թոթովելով յայտնել է, որ Պրուսական արքայական գերդաստանի պատկերները գահինը մէջ են:

Իշխանն ու իշխանուհին և իրանց հետևորդները պատռասիրուել են արեւելեան ճաշակով, և 20 ըսպէի չափ գահինը մէջ մնալուց յետոյ գոհ սրտով հեռացել են խոստանալով ուրիշ առթիւ այցելել նաև Ս. Յակովեանց Մայր Տաճարը: